

Կիրովաբադի հայկական եկեղեցու վերջին քահանա տեր Սահակ Սահակյանի անունն այլևս ընդմիջումն է հայ ժողովրդի պատմության մեջ ոչ միայն իբրև հոգևոր անձ, այլ նաև որպես մարդ, որը ղեկավարել է Գանձակի թեմի ինքնապաշտպանությունը և հանդես բերել կամք ու կազմակերպական տաղանդ: Հայր Սահակն այս օրերին Երևանում էր և սիրով համաձայնեց պատասխանել մեր հարցերին:



վից՝ ավելի տարեցները: Առաջին բուսեցողուն ինձ քարկոծեցին: Մարմնիս վրա դեռ երկար չէին անհետանում կապտուկները: Նրանք փորձում էին պոկել փարաջաս, և պետք է ասեմ՝ ստիպված եղա փրկություն գտնել եկեղեցու շենքում: Գերեզմանոցից ես գալիս էի խաչով, իսկ խաչն աշխատում էին ինձնից խլել: Ես ամբոխին դիմեցի կոչով, առաջարկեցի վերջ տալ ջարդարարությանը, քարձրացրի խաչը, և ամբոխը կանգ առավ: Բայց տարբեր տեղերից գալիս էին ջարդարարների նորանոր ռմակներ, և անհնարին էր միաժամանակ բոլո-

## ՀԵՐՈՍԸ

### ՊԱՏԿԱՆՈՒՄ

### Է ԱԶԳԻՆ

— Հայր Սահակ, ձեր հիշողության մեջ պահպանվե՞լ են, արդյոք, 1988 թվականի դրամատիկ օրերը, Գանձակում հայերի գտնվելու վերջին իրադարձությունները:

— Իհարկե: Ինձ մոտ փաստաթղթեր կան, այն ժամանակ արված լուսանկարներ: Դրանց մի մասը ես հանձնել եմ այնտեղ, ուր հարկն է, իսկ մնացածը պահել եմ ինձ մոտ:

— Ձեզ համար փետրվարյան, թե՛ նոյեմբերյան իրադարձություններն էին՝ առավել դժվար ու ճակատագրական:

— Ես իմ տեղում էի և՛ փետրվարին, և՛ նոյեմբերին: Ինչպես դուք հիշում եք, այն տարի փետրվարը 29 օրից էր: Հենց 29-ի երեկոյան, երբ ես հանգստանում էի, ինձ տուն զանգահարեցին և զգուշացրին, որ մտածեմ իմ անվտանգության մասին: Ես չէի կարող թողնել ոչ եկեղեցին, ոչ հավատացյալներին:

— Այդ ընթացքում եկեղեցին ժողովրդին ոգևորող աշխատանք տանո՞ւմ էր:

— Փետրվարյան իրադարձություններից հետո ժողովուրդն սկսեց ավելի շատ հարգել եկեղեցին, քանի որ այն անմիջապես դարձավ բոլոր հայերին միավորող կենտրոն: Ի դեպ, մինչև աշուն Կիրովաբադից հայերի զանգվածային արտահոսք չէր նշկատվում: Ես քացատրում էի մարդկանց, որ հիմա հեռավարվելու ճիշտ ժամանակն է: Նոյեմբերի 1-ին Կիրովաբադում սկսվեց հանրահավաքների նոր ալիքը: Նրանք հավաքվում էին կայարանի մոտ և այնտեղից քայլելով գնում էին դեպի քաղաքի հայկական թաղամասերը: Ես լավ եմ հիշում այն օրը, երբ սկսվեց մեր եկեղեցու նոր գրոհը: Այդ օրը մի կնոջ թաղման արարողությունից ինձ տուն էին բերել, և ես տեսա, որ ուղղակի իմ ետևից, կրակակոխ, դեպի եկեղեցի է գալիս ջարդարարների ամբոխը: Առաջին շաբաթը 13—16 տարեկան պատանիներ էին, իսկ նրանց ետե-

րին հանգստացնել: Հետաքրքիրն այն է, որ ամբոխին առաջնորդում էին երեք միլիցիոներ և հենց իրենք էլ ղեկավարում էին վայրագ գործողությունները: Ես վազեցի դեպի եկեղեցու թևը, որովհետև արդեն սպանության հոտ էր գալիս. աղբրեջանցիներից մեկը փորձեց կառչել ձեռքիցս, և ես ստիպված էի խաչով հարվածել նրա ատամներին: Եկեղեցու դուռն ինձ փրկեց մահից: Ամբոխը դրսից ճնշում էր, ես ներսից գցեցի փականը: Այն ամուր էր, դուռը դիմացավ: Եվ անմիջապես սկսեցին եկեղեցի գալ հայերը:

— Հայր Սահակ, դուք օգնության համար չդիմեցի՞ք իրավապահ մարմիններին:

— Դե, միլիցիոներներն, ինչպես տեսաք, իրենք էին ղեկավարում ջարդերը, և նրանց դիմելն իմաստ չուներ: Առաջնության ես զրկացի գորամաս: Աղբրեջանցի պրապորշիկները ինձ կոպիտ դիմավորեցին և չէին ուզում ներս թողնել, սակայն գեներալն իմացավ այդ մասին և կարգադրեց ընդունել հոգևորականին: Ես նրան ասացի. «Ես քրիստոնյա եմ: Ժողովուրդն իմ ձեռքերն է համբուրում, իսկ ես համբուրում եմ ձեր ձեռքը. քրիստոնյաներ, օգնեցեք քրիստոնյաներին: Երբ մեզ հետ հաշիվ մարեն, կգա և ձեր հերթը»: Գեներալը կարգադրություն արեց. մեզ մոտ ուղարկեցին 12 տանկ: Ողջ կյանքում ոչ մի նման բան ես չեմ տեսել: Տներում հայերի ջարդ էր: Մի բնակելի շենքում, օրինակ, ապրում էր հայկական մի ընտանիք: Նրանք հազիվ

փախել էին եկեղեցի: Բերեցին մի կնոջ, որին բռնաբարել էին 18 տականքներ: Սկսվեցին խժոժություններ նաև ոռուների դեմ: Ռուս կանայք նույնպես թաքնվում էին մեր եկեղեցում: Ջոհվեցին երկու զինվոր և մեկ սպա: Նրանց բերեցին մեզ մոտ: Եկեղեցին այդ ժամանակ արդեն վեր էր ածվել հոսպիտալի: Մի ոռու կին, Խորհրդային Միության հերոս, գոռում էր ոռու գնդապետին. «Ինչպե՞ս կարող եք դուք հանգիստ նայել այս մարդասպաններին: Ինչո՞ւ չեք կրակում»: Իսկ նա, խեղճ, ուսերն էր թոթվում հրաման չկա: Ջորամասից ես երեք հեռագիր ուղարկեցի Հայաստանի ղեկավարությանը, կաթողիկոսին և Գորբաչովին: Գորբաչովից ոչ մի պատասխան չհետևեց:

— Հայր Սահակ, Կիրովաբադի բնակիչները տալիս են իրենց պաշտպանության հերոսների անունները. Չինացի, Յապոն, Սև: Գիտե՞ք դուք այդպիսի ծածկանուններով մարդկանց:

— Դրանք սովորական կիրովաբադյան հայ տղաներ են: Իրոք, ես գիտեմ մարդկանց, որոնց անունները չէին տալիս: Ինչ վերաբերում է Չինացուն, ապա նրա անունը Համլետ է: Մենք այնտեղ ստեղծել էինք հայերի պաշտպանության կոմիտե, և այդ տղաները տարբեր ժամանակներում ինձ օգնություն էին ցույց տալիս, սատարում էին բնակչությանը: Նրանք բազմաթիվ հայ ընտանիքներ դուրս բերեցին քաղաքի աղբրեջանական մասից, ուղղակի փրկեցին նրանց: Ես չգիտեմ, թե ինչու այդ տղաներն այդպիսի տարօրինակ ծածկանուններ ունեն, բայց կարող եմ ասել, որ նրանք իսկական հերոսներ էին: Ես կավելացնեի նաև Խաչիկին, Արուիին:

— Ձեզ հայտնի՞ է, թե ինչ է եղել Կիրովաբադի եկեղեցուն, ձեր տանը:

— Եկեղեցին, որքան գիտեմ, դեռ կանգուն է, իսկ իմ տանն այժմ ապրում է նախկինում հայաստանաբնակ մի աղբրեջանցի:

— Հայր Սահակ, հայտնի է, որ Կիրովաբադից հետո դուք ծառայում էիք Վլադիկավկազում: Բայց հիմա ասում են, թե դուք արտասահման եք մեկնում:

— Այո: Միանգամայն անսպասելիորեն ես հանրաճանաչ դարձա, այժմ մեկնում եմ Բոմբեյ և Կալկաթա՝ հայ համայնքի հրավերով, ծառայելու նույն քահանայական պաշտոնում: Կմեկնեմ քառացիորեն մոտ օրերս:

— Ձեզ բեղմնավոր գործունեություն եմ բարեմաղթում:

— Շնորհակալ եմ: Իմ հերթին ձեզ, լեռագրողներիդ, ցանկանում եմ բաց շթղնել մեր համայնքի պատմությունից ոչ մի բան: Թող Աստված ձեզ հետ լինի:

Հարցազրույցը վարեց Ա. ՏԵՐ-ՔԱԴԵՎՈՍՅԱՆԸ